ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ.

—

Ա.-Եր-ը Երկրը. Բնստանում «Palestine Colonisation and christian Missionary Association» անունով ընկերութիւն է հիմնուած, որը իրան նպատակ է դրած ամբողջ Պաղեստինը քաջառողջ և աշխատասէր բողոքականներով լեցնել, որպէս զի այդ երկրին իւր նախկին փայլը վերադարձնեն. Ընկերութեան անդամները նոյնպէս մտածում են նրան վերադարձնել իւր նախկին հարստութիւնը և վաճառականութիւնն ու արուեստները ցայն աստիճան որ, կարողանան երկրի միջից հոսեցնել կաթի ու մեղրի աղբիւրներ. ընկերութիւնը միտք ունի առ այժմ դեռ ևս մի փոքր կտոր հող գնել.

—

Պրուսիայում ազգային լուսաւորութեան նախարարը մի շրջաբերական է հրատարակել, որով «կառավարութիւնը ճանաչելով մարմնամարզութեան անուրանալի օգուտները, վճռեց ամենայն տեսակ միջոցներ տալ համալսարաններում մարմնամարզական բաժին կազմելուն, ուր ուսանողները ոչ միայն կարողանային անվճար մարմնամարզութեամբ պարապել, այլ և գիտնական կերպով նրան ուսումնասիրել.

Երբ արդեօք մեր հայերն էլ իւրեանց օգուտը հասկանալով օրինակ կվերցնեն Եւրոպայից, 1) բայց այն միայն ինչ որ իսկապէս մեզ էլ, ամենին էլ օգտակար և ժամանակից պէտքերին էլ բաւականութիւն տար ինչպէս մարմնամարզութիւնն է, երկրագործութիւնը ևն. ևն. Բայց չէ. նախ թող հասկանան կոսմոպոլիտական, «առանց կրօնի խտրութեան» ևն. ևն. գաղափարներ ևն.

Մենք մեր կողմից խորհուրդ կտայինք դոնէ մեր մէջ եղած բարձր ուսումնական հաստատութիւնների վարչութիւններին ուշադրութիւն դարձնել մարմնամարզութեան վերայ չմոռանալով, որ «Mens sana in corpore sano» իսկ մարմնամարզական դրոշակն է «Friseh, fromm, froh, frei»

—

Привительственный Вѣстникъ պաշտօնական լրագրից տեղեկանում ենք, որ Ռուսիոյ ամբողջ Պետութեան մէջ անցեալ 1882 թուականին ի լոյս են ընծայուել 776 պարբերական հրատարակութիւնք. դրանցից 197ը Պետերբուրգում և 75ը Մոսկուայում. Պետերբուրգում առանց գրաքննչի լոյս են տեսել 101 հրատարակութիւններ. իսկ Մոսկուայում՝ 90. Պետերբուրգում հրատարակուել են ամենօրեայ թերթ 19, Մոսկուայում 12. Հաբաթաթերթ հրատարակուել են Պետերբուրգում

(1) Ոչ թէ այն ինչ որ դեռ ևս մեզ համար կանուխ է կամ ինչ որ. եթէ ճիշտը խոստովանելու լինինք, հենց մեր գարգացածներից շատերն էլ չեն հասկանում.

15, Մոսկուայում 6. Պետերբուրգի մէջ հրատարակուել են ամսական օրագիր 63, Մոսկուայում՝ 22, Հաբաթական օրագիր հրատարակուել են Պետերբուրգում 34, Մոսկուայում՝ 10. Մասնաւոր անձանց ծախքով տպագրուել են 193 հրատարակութիւնք, իսկ Կառավարութեան, քաղաքական և այլ և այլ ընկերութեանց ծախքով՝ 79.

Վարշավում ի լոյս են ընծայուել 79 հրատարակութիւնք, Հելսինգֆորսում 36, Ռիգում՝ 23, Տիֆխիսում 21, Կիեվում՝ 20, Օդեսայում՝ 19, Ղազանում՝ 11, Խարկովում՝ 11, Ռեվելում՝ 9, Դերպտում՝ 8, Ուշէաբորգում 7, Ռբօում, Վիլնայում, Վօրոնեժում և Իւվեասկիշում՝ իւրաքանչիւրում 6, Քիշնեւում, Լիբաւէում, Նովգորոդում, և Սարատովում՝ իւրաքանչիւրում՝ 5, ութն քաղաքներում իւրաքանչիւրում 4, քսան և մէկ քաղաքներում իւրաքանչիւրում 3, երեսուն ութ քաղաքներում՝ իւրաքանչիւրում 2 և մնացեալ երեսուն եօթն քաղաքներում իւրաքանչիւրում 1.

Մայրաքաղաքներում ի լոյս ընծայվող պարբերական հրատարակութեանց իւրաքանչիւր օրինակի թիւը մօտաւորապէս հետևեալն է.—

ի լոյս է ընծայուել.	օրինակ.	հրատարակութիւն.
	71,000 —	1
	25,000 —	1
	24,500 —	2
մինչև	20,000 —	5
10,000—	20,000 —	7
5000 -	10,000 —	25
1000—	5,000 —	87
500—	1,000 —	94
100—	500 —	39

Ռուսաստանի 124 գաղթականատեղիներում ի լոյս են ընծայուել 504 հրատարակութիւնք.—ութսուն նահանգական քաղաքներում՝ 400. Երեսուն երկու գաւառական քաղաքներում՝ 58—տասնևերկու ծովեզերեայ նահանգական և գաւառական քաղաքներում՝ 46. ընդ ամենը 504.

Ռուս լեզուով ի լոյս են ընծայուել 265 հրատարակութիւն, Լեհերէն՝ 80. Գերմաներէն՝ 36. Էստոներէն՝ 10 Լատիներէն՝ 13. Հայերէն՝ 9. Վրացերէն՝ 4. Ֆրանսերէն՝ 2. Թուրքերէն 2. Պարսկերէն՝ 1.

—

Ցեղէց, մեծ-կէց և ուրիշ ուց նման դիզ-դնելէց հետոյ-ելոյ դիզ-ց, Ցեցը ըստ մեծի մասին գոյանումէ գարնանը քարաշէն տներում, Փակուած և անբնակ տների և արկղների մէջ նորան ոչնչացնելու ամենալաւ միջոցը նաֆտն է. (нефталинъ). բայց այն տներում, ուր մարդիկ են բնակվում նաֆտը անյարմար է, որովհետև բնակիչների վերայ անախորժ ու ծանր ներգործութիւն է ունենում. Նորա ոչնչացնելու աւելի լաւ և զօրեղ միջոցը էրէց-ն է (персидская ромашка). երիցուկը պէտք է ածուխի կրակի

վերայ զօ. սմավարի մէջ պրեալ, ծխել. սորա ծուխը մարդկանց համար համարեա անզգալի է, բայց ցեցը սորա հոտը առնելուն պէս կէս ժամից յետոյ դուրս կգայ իւր բնից և սատկած գետին կթափի. Ապա գետինը մաքուր պէտք է սրբել և երկու օրից յետոյ դարձեալ կրկնել երիցուկի ծխելը. Այսպիսով ցեցը դուրս կգայ բոլորովին տան ամեն կահկարասիքի և փափուկ անկողինների միջից, որովհետև և սոցա մէջ թափանցումէ երիցուկի հոտը. Այս միջոցը կներգործի և տան մէջ գտնուած մոծակների և սոցա նման միջատների վերայ.

—

Մ-ՆԻՆԵԷՆ ԻՆ-ԻՆ ԵՐԻ-Ը-ՐԻ-ՆԸ. Վերջապէս ստատիստիկական ճիշտ տեղեկութիւնների դուրս եկաւ մեռնող մանկիկների թիւը. 100 մանկիկներից, որոնք իւրեանց մոր ծիծն են կերել, առաջին տարին մեռել են միայն 18-ը, ծծմայրներին յանձնուածներից 100-ից, 28, հասարակ կաթով և այլ միջոցներով մեծացողներից 60, իսկ բարեգործական հաստատութեանց ձեռքն անցնողներից 80.

Այս ճիշտ տեղեկութիւնները յանձնում ենք մեր լուսաւորուած (?!) տիկինների խորին ուշադրութեանը, արդեօք երբ պիտի խրատուենք, մի՞թէ սա է Եւրոպական լուսաւորութիւնը, ոչ ազնուափայլ տիկիններ, հաւատացնում եմ ձեզ, որ այս մասին ամենակոշտ գեղջուհին 1000 անգամ լուսաւորուած է քան մի ուրիշը, որ իւր երեխեն կերակրելը իւր սեպհական կաթով գժոխային տանջանք է համարում. գեղջկուհին իւր զաւակը առողջ է ծնում և առողջ յանձնում ազգին. Իսկ դուք գիտէք որ «Mens sano in rorpore sano».

ՑՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՍԻՆՕԴԻ.

Ի 14 Ապրիլի 1883 ամի, Սինոդս Ս. Էջմիածնի ընկալեալ զգրութիւն Պատրիարգի Հայոց Կ. Պոլսոյ Գեր. Ներսէս Արքեպիսկոպոսի ի 18 Յունվարի տարւոյս թիւ 28, յորում ի միջի այլոց խնդրէ ոտուգել եւ հաղորդել ինքեան թէ՝ արդարեւ զոյք հանգուցեալ Վեհափառ Հայրապետի կողոպտեալք են ընդ ձեռն Քարտուղարի Նորին Օծութեան Վահրամ Եպիսկոպոսի եւ Ներքին սպասաւորի Վեհի Ստեփաննոսի Դէմիրչեանց եւ գործակցի նոցին ի յափշտակութեանն Հիկոդայոսի Թիլպէնտճեանց, որպէս զրէ ինքեան Արժ. Կիւրեղ վարդապետն Արապեանց յ 31 Դեկտեմբերի անցեալ ամի, հաճեցաւ առ վերոգրեալ զրութիւն Գեր. Պատրիարգին Ծանուցանել թէ՝ յետ մահուան ի Տէր հանգուցեալ Գէորգայ Կաթուղիկոսի եւ յետ փառաւորն յուղարկաւորութեան մեռնարկեալ ըստ օրինի արձանագրել զյիշատ մնացեալ կայս Նորին Օծութեան ի ներկայութեան պատգամաւորաց ոմանց եկելոց ի Տփխեաց. Աղէքսանդրապօլոյ. Երեւանայ եւ ի հնոյն Նախիջեւանէ ի հանդէս յուղարկաւորութեանն. արդարեւ յուսով մեծաւ ակնունէր Սինօդս գտանել զնշանաւոր գումար դրամոց եւ զմթերս բազումս ընդ Քանկագնոց. ըստ որում որպէս յայտնի է Սինոդիս եւ ամենից իսկ.